ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 230-Ա

ՄԵՐԻ ԳԱՌՆԻԿԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8) կետով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154 հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով «Ալավերդու համայնքապետարանի վարչատուգանային հանձնաժողով»-ի 06.07.2022թ. արձանագրությունը ***որոշում եմ՝***

1. Մերի Գառնիկի Իսրայելյանին (հասցեն՝ Ալավերդի համայնք, գյուղ Հաղպատ,1 փ., 33/1) ենթարկել վարչական պատասխանատվության սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված գումարը ենթակա է վճարման Ալավերդու համայնքապետարանի 900265121146 հաշվեհամարին:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ստացման պահից հետո՝ 2 ամսվա ընթացքում:
4. Սույն որոշման 2-րդ կամ 3-րդ կետի պահանջները չկատարելու դեպքում այն կդառնա անբողոքարկելի վարչական ակտ և գումարը կբռնագանձվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. հուլիսի 08
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 231-Ա

ԱԳՆԵՍԱ ԿԱՐԼԵՆԻ ՌԱՄԱԶՅԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Ալավերդու համայնքապետարանի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով»-ի 06.07.2022թ. արձանագրությունը ***որոշում եմ***՝

1. Դադարեցնել Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ 1/16-26 հասցեի բնակչուհի Ագնեսա Կարլենի Ռամազյանի Ագնեսա Կարենի Խաչիկյանի /ծնված՝ 26.11.2005թ./ և Տիգրան Կարենի Խաչիկյանի /ծնված՝ 29.05.2007թ./ հոգաբարձությունը և Արեն Կարենի Կիրակոսյանի /ծնված՝ 12.04.2010թ./ խնամակալությունը:
2. Դադարեցնել Ագնեսա Կարլենի Ռամազյանի՝ Ագնեսա Կարենի Խաչիկյանին, Տիգրան Կարենի Խաչիկյանին և Արեն Կարենի Կիրակոսյանին հասանելիք թոշակը, նպաստը և դրամական այլ մուտքերն ստանալու և տնօրինելու իրավունքը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. հուլիսի 08
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 232-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ ու 32-րդ հոդվածներով, Ալավերդի համայնքի 2023 թվականի բյուջետային գործընթացն սկսելու նպատակով ***որոշում եմ***՝

1. Հաստատել Ալավերդի համայնքի 2023 թվականի բյուջեի նախագծի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքների իրականացման վերահսկողությունը դնել Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժնի պետի պաշտոնակատար Վահե Պապինյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. հուլիսի 08
ք. Ալավերդի

Ալավերդի համայնքի 2023 թվականի ծրագրային բյուջեի նախագծի մշակման, կազմման և հաստատման աշխատանքների կազմակերպման ժամանակացույց

Հ/հ	Ժամկետը	Աշխատանքներ	Պատասխանատու և կատարող
1	Հուլիսի 12	Բյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների որոշում	Համայնքի ղեկավար և ավագանի
2	Հուլիսի 15	Մեթոդական ցուցումների, եկամուտների և ծախսերի հաշվարկման սահմանված ձևերի տրամադրում բաժիններին և ոչ առևտրային կազմակերպություններին	Համայնքի ղեկավար և ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժին, Եկամուտների հաշվառման, հավաքագրման և գույքի կառավարման բաժին
3	Հուլիսի 21-29	Եկամուտների նախահաշիվների կազմում և ծախսերի հիմնական ուղղությունների որոշում	Համայնքի ղեկավար և ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժին Եկամուտների հաշվառման, հավաքագրման և գույքի կառավարման բաժին
4	Օգոստոսի 02-31	Բաժինների և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրենց համապատասխան հիմնավորումներով ծախսային ծրագրերի, հայտերի կազմում և ներկայացում համայնքի ղեկավարին	Համայնքի ղեկավար, համայնքապետարանի աշխատակազմի բաժիններ և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ
5	Սեպտեմբերի 01-07	Ներկայացված ծրագրերի և հայտերի նախնական քննարկում ներկայացնողների մասնակցությամբ	Համայնքի ղեկավար, համայնքապետարանի աշխատակազմի բաժիններ և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ
6	Սեպտեմբերի 09-20	Ներկայացված տվյալների ամփոփում և բյուջեի նախագծի նախնական տարբերակի կազմում	Համայնքի ղեկավար, ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժին
7	Սեպտեմբերի 23-30	Բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկում համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմիններում, ավագանու մշտական հանձնաժողովում և այլն	Համայնքի ղեկավար, ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժին, աշխատակազմ
8	Հոկտեմբերի 03-11	Բյուջեի նախագծի նախնական տարբերակի մեջ քննարկումների արդյունքում փոփոխությունների և լրացումների կատարում	Համայնքի ղեկավար, ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժին
9	Հոկտեմբերի 12-25	Փոփոխությունների կատարում բյուջետային հատկացումների մեջ՝ հաշվի առնելով ՀՀ համայնքներին 2023 թվականին պետական բյուջեից տրվելիք հատկացումների հաստատված չափը	Համայնքի ղեկավար, ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժին
10	Հոկտեմբերի 26-31	Բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկում համայնքի ղեկավարի մոտ	Համայնքի ղեկավար, ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժին
11	Նոյեմբերի 01-22	Բյուջեի նախագծի նախնական տարբերակի հանրային բաց քննարկում	Համայնքի ղեկավար, ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժին, աշխատակազմ
12	Նոյեմբերի 23-28	Բյուջեի նախագծի նախնական տարբերակի մեջ քննարկումների արդյունքում փոփոխությունների և լրացումների կատարում ու համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծի կազմում	Համայնքի ղեկավար, ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժին
13	Նոյեմբերի 28-31	Համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծի ներկայացում ավագանու անդամներին	Համայնքի ղեկավար, ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժին
14	Դեկտեմբերի 06-16	Բյուջեի քննարկում և հաստատում ավագանու կողմից	Համայնքի ղեկավար, ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժին, աշխատակազմ
15	2023թ. Հունվարի 1	Ֆինանսական տարվա սկիզբ	

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ,ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ
ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Վ.Հ.ՊԱՊԻՆՅԱՆ